

են կազմեր, թէ սոսկ հանդիսատես չեն լինիր հոգաբարձուաց ինքնակամ ու քմահաճութեան գործառնութեանցը, այլ սիրով կնուիրեն իրենց լուման ի գանձանակ դաստիարակութեան զաւակաց, և յաւարտ ուսումնական տարւոյն արդարացի իրաւունք կունենան հոգաբարձուներէն հաշիւ պահանջել Գարոցի գումարներու վրայօք և վարժապետներէն յառաջադիմութիւն գասատրութեան մէջ:

Ի՞նչ պատճառաւ է որ Ռուսաց մեծատարած ծերութեան մէջ գաւառական ու գիւղական Գրպրոցները անսայթաք առաջ երթալով՝ իրենց նըպատակին կհասնին, մի՞ թէ միայն անո՞ր համար որ ապահովուած են նիւթականապէս, վարժապետք անխափան իրենց ուժիկը կընդունեն յարբուտուս. ո՛չ. ըստ իմ կարծեաց այդ մեծ պատճառ չկրնար համարուիլ, այլ գլխաւոր պատճառն է միանգամ հաստատուած կանոնադրութեանց ու դասատուութեան ցուցակներուն ճշտիւ կատարումն է ու զանցառութեան երկիւղը: Գիցո՞ւք թէ արդարեւ դրամական ապահովութիւնն է գաւառական Գրպրոցաց յարատեւութեան գլխաւոր պատճառը. բայց մէք չունիմք տակաւին Խրիմու և Պեսարապիոյ մէջ այնպիսի Գրպրոց մի, յորում աւանդուած ուսման ու առարկայից գոնեա՛ կէսը աւանդուի աշակերտաց. ուստի և անոնց այս դրութեանը մէջ կարօտութիւն մի չերեւեր մեծագումար դրամազխոց. եղածներն ալ կարող էին բաւականացնել Գրպրոցաց աշակերտները հասցնելով զիրենք կէտադրեալ նպատակին, բայց արի՛ տես որ այդ եղած գումարները ո՛չ թէ շահեցուցիչ ու ապահով՝ հապա շուայիչ ու կորստական ձեռքերու մէջ են. այնպիսի անձանց ձեռքը, որոնք քսան երեսուն տարի շարունակ հոգաբարձութիւն կրնեն, հաշիւ պահանջող չեն տեսած, քննութեան ու պատասխանատուութեան չեն նիւթարկուած, հասարակ ժողովորեան ձայնը առ ոչինչ համարած են. փառասիրութեամբ ու սնապարծութեամբ լցուած՝ կողմնասէր աշառութեամբ վատնած են ժողովորեան նուիրատուութիւնը փախստական անձանց ու եկաւոր տղէտ դաստիարակաց ընդհատ վարժապետու-

թեանը զայն յանխորհուրդ շուայելով, որպէս զի «փառաւորեցին ի մարդկանէ»:

Օրինակի համար մէջ բերենք Աքիրմանի Գրպրոցը, նորա դրամազուտը, կառավարութեան կերպը, և հետ զհետէ ուրիշ քանի մի քաղաքներունը, որպէս զի լաւ պարզուին մեր վերոյիշեալ խօսքերը, ճշմարտուին Գրպրոցին վերայ մեր ըրած առարկութիւնները, և չհամարուին կիրք նախանձու և խռովասիրութեան հետեւեալ ստոյգ ու ի բազմաց վկայեալ խորհրդածութիւնքը:

(Շարունակելի)

ՅԱՐԵԿԱՐՁԻ ԳԻՇԵՐ.

Արդի լուսաւորեալ թագաւորաց փայլուն անուանցն մասնակից լինել կճգնի նա և Պարսից Շահն զանցառութեան խաւարն հալածելով իւր բարեկարգութեամբը, ի նշան որոյ զՄիրզայ Հուսէյինխանն երկրորդ իւր անուանելով՝ Պարսկաստանի բարեկարգութիւնն և լուսաւորութիւն նորահանձարեղ խոհականութեանը և լուսաւոր գաղափարացը կ'յանձնէ, որ Պարսկաստանի լուսաւորեալ և բանագէտ անձինքը ի թիւս որոց և Հայազգի Միրզայ Մեղքոմխան Ապահանցին իւր շուրջը համախմբելով ազգային լուսաւորութեան և յառաջադիմութեան լապտերներն ազնիւ կանոնադրութեանց իւղովն վառել սկսաւ Պարսկաստանի մտաւոր և բարոյական խաւարն հալածելու թիւ, որոց մի ըստ միտքէ թուելն այլում բարեպատեհ ժամանակի թող լով՝ կ'իլուեամ յուրախութիւն Պարսկահայոց նորա իւր խղճալի բնակչաց արած յուսալիր առաջարկութեանց մին նշանաւորն յայտնել, զոր Գաւրէժ հեռագրով ընկալաւ այն է լուսաւորութեամբ և թնդանօթածգութեամբ կատարել կայսեր տարեդարձի օրն ի 6 Սէֆեր ամսոյ 13 Ապրիլի, և նոյն զիշերի քաղաքիս բոլոր բանական ծնունդք թէ Հայ և թէ Պարսիկ ճիշտ տեղեկագրութեամբ յայտնել ինքեան, որոց ըստ կայսերական կարգադրութեանց տարեկան թօշակ պիտի նշանակուի պետութեան գանձարանէն մին-

չե ցմահ, ուստի ի շարս բազմաթիւ տաճիկ մանկանց՝ չորս Հայ մանկտի ևս ի քաղաքէս նշանակեալ ներկայացան նորին մեծութեան, զոր գրելով յարգոյ խմբագրութեանդ՝ խնդրեմ զՏրատարակութիւնն ի խնդութիւն Հայասէր զգայուն սրտից:

Նապար Նապարէիէանց

Է Դարէի:

ՀԵՂԵՂ Ի ՍԸՎՐԻ.

Յարձեա թէ յայսմամի Ատրպատական Հայազգեաց թշուառութեանց բազմաիեղկեան զոներըն բացուեց, վասն զի գեռ գրիչներս չգողրացրած՝ աղքատաց սոխալուկ և աւաղելի կեանքն մեր ազգի լըութեանը յայտարարելուց՝ ահա նոր թշուառ վիճակ կբացուի Սալթի գեղջ բնակչաց քանզի անցեալ մայիսի 15 ին ընդ մուտս արեգական գրիթէ արտաքոյ բնականին սաստիկ անձրեւեց, որք միանալով գետահետեալ մոխն զիւղն, ահարկու տեսարան կազմելով, և յանկարծ լցուելով բնակութիւններն՝ բարեկամ բարեկամի՝ և դրացի դրացոյ կենաց փրկութեան օգնականութեանն անձեռնահաս կգտնուէր, ըստ որում հազիւ իւր կենաց յոյսն երկայութեամբ ունէր մինչև արտաքոյ գեղջ ելանին, քանզի որմ և տանիք յանկարծակի փլատակելին այն ահարկու հեղեղի սաստկութեանն, ահարկու, վասն զի տեսարք իւրեանց ընչից կորստեանն հանդիսատես լինելով՝ չփտահացան միջամտել և ազատել, ըստ որում իւրեանց կեանքն էլ տակաս պիտի տային ընչից փրկութեանը, եթէ յանդգնէին բընակարանն մտնելու. կարեկցելի՛ տեսարան. մանկունք ողբալով իւրեանց ծնողաց զիրկն կընկնեն. իսկ ծնողք խորին տրտմութեամբ լցուած՝ այդ սոսկալի հեղեղի գործողութեանց կնային, քանզի կայից և կարասեաց հետ էլ անասունների կորուստն կտեսնէին, թէ ընդ փլատակօք և թէ ի ջուրս. այս կարեկցական և կորստական հանդէսը մի քանի ժամէն զկնի իւր ահարկութիւնն փտահարութեան փոխարկեց, ըստ որում ընդ իջանկն

ջուրց փտահացան բնակիչքն մտանել ի զիւղն ուր 40 Հայք կգտնեն իւրեանց տունը հիմնայատակ կործանուած, ոմանք կիտով չափ փլատակեալ, իսկ բազումք խախտեալք, ուր բնակութիւնն սաստիկ երկիւղի տակ էր. զալով նոյն դիւղի մէջն զտնուած պարսից, 350 տուն վերոյիշեալ երեք կերոյ վտանգի տակ:

Այս անակնունելի վտանգի համար տեղական Հայ ժողովուրդք հանրագրութեամբ կղիմեն տեղւոյս Գերապատիւ Առաջնորդի զթութեանն և օժանդակութեանն, խնդրելով միանգամայն, զրաւոր խնդրել ի Պարսից կառավարութեանէ, ներկայ ամի արքունի հարկի պահանջն ներել, զոր խստիւ կգործադրեն հարկապահանջք այս դառն պատահարէն անմիջապէս զկնի. զոր և Գերապատիւ Առաջնորդն զրաւորապէս ներկայացրեց բարձրագոյն դրան՝ նոցա ի վերայ թշուառ ժողովրդոց կարեկցութիւն խնդրելով. զորմէ ծանուցանելով խմբագրութեան ազգօգուտ Արարատիդ, զորաբազմաշահ էջերուն միոյ մէջ հիւրընկալել կխնդրեմ:

Օհան Տէր Օհանէանց

Է 1 յունիս 1872 թ.

Է Դարէի:

Ս Ր Ե Ր Ա Ց:

Մինչդեռ համայն աշխարհ իւր մտաւոր բարոյական և նիւթական յառաջադիմութեան հանդէսն ուրախութեամբ սրտի և պարծանօք օրացրաց և ազգաշահ անաթերթից ասպարիզումն վայելչապէս ի խնդակցութիւն համազգեացն հըրատարակէ, տարաբախտ Դաւրէթ՝ որ դեռ նոր զրասիրական և զրադիտական նուիրական ազգաշէն պարտքը զգաց բարեբաղդաբար, և ձեռնածիղ լինի իւր ադիտութեան մթազգաց հորիզոնն պայծառազարգել զիտութեան լուսով, կցաւի տարապայման. քանզի համազգեաց ազգասէր ըլծից և յառաջադիմութեան փափագանացն համապատասխան չէ իւր տխուր և աչտուրջ ուշադրու-